ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«03» 12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 110

Ձեռնարկողը՝ ***<<Արարատ Լադա>> ՓԲԸ***
Ք. Երևան, Մազմանյան 1

Գործունեությունը՝ ***Ավտոտեխսպասարկման կայանի, առևտրի և սպասարկման կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 110

<<19>> 12 2018թ.

<<Արարատ Լադա>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ավտոտեխսպասարկման կայանի, առևտրի և սպասարկման կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<<Արարատ Լադա>> ՓԲԸ
Նախագծող՝	<<Արբակ և որդիներ>>ՍՊԸ, Ա/Ձ Ա. Գալոյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Մազմանյան 1

Ավտոտեխսպասարկման կայանի, առևտրի և սպասարկման կենտրոնի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Աջափնյակ վարչական շրջան Մազմանյան փող. 1 հասցեում, «Արարատ Լադա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի վրա՝ գոյություն ունեցող շինությունների վերակառուցումով, կցակառույցների և նոր շինությունների կառուցումով: Աշխատանքային նախագիծը կազմվել է համաձայն 19.07.2017թ. տրված N01/18-07/2-Մ-3264-476 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինարարական նորմատիվ պահանջների:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ շինություն, որը կծառայի որպես ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայան, առևտրի և սպասարկման կենտրոն:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրի:

Հասարակական նշանակության առևտրային եվ սպասարկման համալիրը տեղակայված է մոտ 36200մ² մակերեսով հողատարածքի վրա, տարբեր շինությունների տեսքով: Հատակագծում առևտրային նշանակության շինությունն ունի 12.345մ² մակերես և բաժանված է 2 հիմնական գոտիների՝ առևտրային և սպասարկման:

Առևտրային գոտում նախատեսվում է 2.8մ բարձրությամբ հավաքովի մետաղական տաղավարներ: Սպասարկման գոտին բաղկացած է 3 հարկերից, որոնցից յուրաքանչյուրն ունի 4.2 մ բարձրություն: Սպասարկման գոտու առաջին հարկում նախատեսվում է

սպասարկման և ադմինիստրատիվ, երկրորդ հարկում՝ սննդի կետեր և գրասենյակային տարածքներ, իսկ երրորդ հարկում նախատեսվում է ֆիտնես կենտրոն:

Հիմնական առևտրային մասնաշենքի աջակողմյան հատվածում նախատեսվում է տեխսպասարկման և ավտոլվացման կետեր, ետնամասում մեքենաների վաճառքի երկրորդական ավտոշուկաներ և պահեստներ, իսկ ձախակողմյան հատվածում՝ սրճարան:

Նախատեսվում է նաև սակավաշարժ խմբերի անխոչընդոտ շարժը ապահովվող վերելակներ և հաշմանդամների համար համապատասխան կահավորմամբ սանհանգույցներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կատարվելու է տարածքի բարեկարգում՝ եզրաքարերի նորոգում ու փոխում: Շինարարության ընթացքում գրեթե ամբողջությամբ պահպանվելու են տարածքի գոյություն ունեցող կանաչապատ գոտիները: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է 2000մ² ընդհանուր մակերեսով տարածքի կանաչ գոտիների բարեկարգում և համալրում՝ սիզամարգի և մասնագիտական խանութներում վաճառվող տարբեր թփերի տեսքով:

Ավտոտեխսպասարկման կայանի, առեվտրի եվ սպասարկման կենտրոնի տաք ջրի և ջեռուցման համակարգի սպասարկումը կատարվում է տանիքում տեղադրված 850 կվտ ջերմային հզորությամբ կաթսայատնից: Օդափոխությունն իրականացվում է համապատասխան հզորության ներածման-արտածման սարքերով, որոնց հզորությունները հաշվարկված են գործող նորմերով:

Ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կառուցվելու է նոր ներքին կենցաղային կոյուղու համակարգ, տեղադրվելու են նորմաներին համապատասխան նոր սանհանգույցներ, որոնք միացվելու են համայնքային կոյուղատարին: Նախատեսվում է ավտոմատ հակահրդեհային համակարգ:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից ջուր՝ տարածքների ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային և շինարարական (երկաթբետոնե ջարդոն, մետաղե ցինկապատ թիթեղ մետաղական խողովակներ) աղբի տեսքով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը համապատասխան ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի աղբավայր:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ:

- Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ջրցան, որոնց ծավալները կբավականացնեն միայն փոշենստեցման համար, չառաջացնելով մակերևութային հոսքեր:
- Շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսների վրա:
- Շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների պարբերաբար ստուգում և կարգավորում, խլացուցիչների օգտագործում:
- Շինարարական աշխատանքների ավարտ օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:
- Շինարարական նյութերի (հատկապես սորուն՝ ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխումը փակ ծածկով մեքենաներով, քսայուղերի արտահոսքից աղտոտված ավազի կամ մանրախճի փոխարինումը նորով:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, փոշու տարածման և կանխարգելման համար:

- Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, փոշենստեցման աշխատանքներ կատարելու համար:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգում և այլն:

Եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման հետ, որոնք շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կունենան նվազագույն և կարճատև ազդեցություններ՝ չգերազանցելով սահմանված թույլատրելի նորմերը:

Նախնական գնահատման հայտով նախատեսված օդային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումները կնպաստեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կանխարգելմանն ու նվազեցմանը:

Գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են նվազագույն և կարճատև: Պահպանվելու են տարածքի գոյություն ունեցող կանաչապատ տարածքները, միաժամանակ նախատեսելով նոր տարածքների կանաչապատում: Փորձաքննության իրականացման ընթացքում հայտը լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքում, իրականացվել են հանրային քննարկումներ, հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (շինաղբի, կենցաղային աղբի, ջրօգտագործման, ջրահեռացման և այլն):

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական, շինարարական նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Արարատ Լադա>> ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մազմանյան 1 հասցեում նախատեսվող ավտոտեխսպասարկման կայանի, առեվտրի և սպասարկման կենտրոնի վերակառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դռնոյան

Գլխավոր մասնագետ՝ Թ. Նուրիջանյան